Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի
գնման ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԳՄ-ՇՀԱՊՁԲ-17/3-1

ք. Գավառ 28 փետրվարի 2017թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար ՝ Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և Փեն բերս ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Կազանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր/այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհապաղ փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով։

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7 2 կետով նախատեսված տույժը։

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3 2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

3 2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը։

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից։

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները։

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3 3 1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3 3 2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով։

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը։

3.3 4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները։

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում·

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3 4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3 1 2 բ/ և 3 1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4 5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3 4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը·

3 4 9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4 10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 1152790(մեկ միլիոն հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր իննսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4 2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում. /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից. Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5 1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին·

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը.

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2/երկու/ օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1).

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6 4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7 4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում նախատեսվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր.*

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն

միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով·

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի. Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

9 11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9 13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ` 08404767
Բանկ` ՀՀ ֆին.նախ.գործ վարչ.
Հ/Հ 900171078299
Աշխատակազմի ղեկավար

------------------------- Ա.Խլղաթյան
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

`Փեն բոքս` ՍՊԸ
ք.Երևան,Մաշտոցի պող 48
ՀՎՀՀ 00075182
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570017729770100
Տնօրեն`

------------------------- Կ.Ազամյան
ստորագրություն

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ.*

Հավելված N 1
28 փետրվարի 2017թ. կնքված
N ՀՀ ԳՄ-ՇՀԱՊՁԲ-17/3-1 *ծածկագրով գնման պայմանագրի*

## ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՄԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

| N | Անվանում | Չափի միավորը | Բնութագիր |
|---|---|---|---|
| 1 | Ռետին հասարակ | հատ | Ռետինե ջնջող փոքր նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար: |
| 2 | ապակարիչ | հատ | Նախատեսված է No 10, No 24/6, No 26/6 կարիչներով կարված թղթերը քանդելու համար: |
| 3 | թուղթ, A3 ֆորմատի /29.7x42/ | տուփ | A3, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (297X420) մմ |
| 4 | Թղթապանակ,կոշտ կազմով | հատ | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար |
| 5 | Դատարկ սկավառակ, առանց տուփի, CD | հատ | CD-R,700MB/80Min |
| 6 | Կարիչ, մինչև 20 թերթի համար | հատ | Գրասենյակային կարիչ մինչև 20թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար |
| 7 | Թղթապանակ, թելով, թղթյա | հատ | Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ (Б) տիպի, թելակապերով, ստվա-րաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ, ԳՕՍՏ 17914-72 կամ համարժեք |
| 8 | Քանոն պլաստիկ | հատ | Գծաբաժանումներով, 30 սմ և 60 սմ երկարությամբ, պլաստմասսայե, ԳՕՍՏ 17435-72 կամ համարժեք |
| 9 | Գրասենյակային գիրք, մատյան, 70-200 էջ, տողանի | հատ | Համապատասխան ձևաչափերի և տարբեր չափերի |
| 10 | գծանշիչ | հատ | Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով |
| 11 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | հատ | թաղանթ, 50 միկրոն (ֆայլ) |
| 12 | Մատիտ գրաֆիտե միջուկով,հասարակ | հատ | Հասարակ, սև, կարծրությունը HB: |
| 13 | մատիտ, գրաֆիտե, տեղադրվող միջուկով | հատ | Մատիտ մեխանիկական զսպանակային (ցանգային) F, L, MK1 տիպերի, փոխարինվող գրիֆելի անվանական տրամա-գիծը (0,3, 5, 0,5, 0,7, 1,0, 2,0 և 2,2) մմ, ԳՕՍՏ 19445-93 կամ համարժեք |
| 14 | Ամրակ, մետաղյա, փոքր | տուփ | Փոքր գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33)մմ երկարությամբ Թղթի փաթեթը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ |
| 15 | Թուղթ նշումների, տրցակներով | տուփ | Տարբեր գույների 90x90x90 մմ չափերով |

| | | | |
|---|---|---|---|
| 16 | Հաշվասարք գրասենյակային | հատ | 12 նիշանի սեղանի (21x294)չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա,ինքնալիցքավորվող |
| 17 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | տուփ | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ, 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ . |
| 18 | Սոսնձամատիտ, գրասենյակային | հատ | Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար 8 գր: |
| 19 | թուղթ, A4 ֆորմատի1 /21x29 7/ | տուփ | A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ. |
| 20 | Օրացույց, սեղանի | հատ | Սեղանի օրացույց նշումների համար տարբեր չափերի, պոկովի կամ թերթովի, պատվանդանով, գունավոր տպագրությամբ |
| 21 | Թղթապանակ ամրակով | հատ | Թղթապանակ ամրակով A4 ֆորմատի |
| 22 | գրիչ գնդիկավոր | հատ | Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի |
| 23 | Ամրակ, մետաղյա, մեծ | տուփ | Գրասենյակային ամրակներ, մետաղական, 50մմ չափի թղթի տրցակները ամրացնելու համար |
| 24 | ծրար, մեծ, A4 ձևաչափի համար | հատ | Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող |
| 25 | գրիչ գելային | հատ | Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, գելային |
| 26 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | տուփ | Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս |
| 27 | շտրիխներ | հատ | Նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստեր սպիտակեցնելու (ջնջելու) համար, վրձինով, 20 մլ հերմետիկ փակվող տարայով. |
| 28 | Թղթապանակ, արագակար, թղթյա | Ա | Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար |

* Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ք.Գավառ,Կենտրոնական հրապարակ 7 հասցեով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
Բանկ՝ ՀՀ ֆին.նախ.գործ.վարչ.
Հ/Հ 900171078290
Աշխատակազմի ղեկավար
------------------ Ս.Թովմասյան
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

՛Փեն բոքս՛ ՍՊԸ
Ք.Երևան,Մաշտոցի պող.48
ՀՎՀՀ 00075182
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570017729770100
Տնօրեն՝
------------------ Հ.Կաքամյան
ստորագրություն

Հավելված N 2
28 փետրվարի 2017թ. կնքված
N ՀՀ ԳՄ-ՇՀԱՊՁԲ-17/3-1 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2017 թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քան ակը | գինը | քան ակը | գինը | քան ակը | գինը | քանա կը | գինը | քան ակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Ռետին հասարակ | հատ | 20 | 20 | 400 | 50 | 1000 | 50 | 1000 | 80 | 1600 | 200 | 4000 |
| 2 | ապակարիչ | հատ | 100 | 2 | 200 | 5 | 500 | 5 | 500 | 8 | 800 | 20 | 2000 |
| 3 | թուղթ. A3 ֆորմատի /29 7x42/ | տուփ | 3000 | - | - | - | - | [illegible] | 3000 | 1 | 3000 | 2 | 6000 |
| 4 | Թղթապանակ.կոշտ կազմով | հատ | 500 | 7 | 3500 | 17 | 8500 | 18 | 9000 | 28 | 14000 | 70 | 35000 |
| 5 | Դատարկ սկավառակ. առանց տուփի. CD | հատ | 70 | 10 | 700 | 25 | 1750 | 25 | 1750 | 40 | 2800 | 100 | 7000 |
| 6 | Կարիչ. մինչև 20 թերթի համար | հատ | 300 | 5 | 1500 | 12 | 3600 | 13 | 3900 | 20 | 6000 | 50 | 15000 |
| 7 | Թղթապանակ. թելով. թղթյա | հատ | 45 | 30 | 1350 | 75 | 3375 | 75 | 3375 | 120 | 5400 | 300 | 13500 |
| 8 | Քանոն պլաստիկ | հատ | 50 | 20 | 1000 | 50 | 2500 | 50 | 2500 | 80 | 4000 | 200 | 10000 |
| 9 | Գրասենյակային գիրք. մատյան. 70-200 էջ. տողանի | հատ | 330 | 15 | 4950 | 37 | 12210 | 38 | 12540 | 60 | 19800 | 150 | 49500 |
| 10 | կճանշիչ | հատ | 90 | 15 | 1350 | 37 | 3330 | 38 | 3420 | 60 | 5400 | 150 | 13500 |
| | [illegible] | հատ | 6 5 | 1500 | 9750 | 3750 | 24375 | 3750 | 24375 | 6000 | 39000 | 15000 | 97500 |
| 12 | Մատիտ գրաֆիտե միջուկով.հասարակ | հատ | 20 | 25 | 500 | 62 | 1240 | 63 | 1260 | 100 | 2000 | 250 | 5000 |
| 13 | մատիտ, գրաֆիտե, տեղադրվող միջուկով | հատ | 90 | 5 | 450 | 12 | 1080 | 13 | 1170 | 20 | 1800 | 50 | 4500 |
| 14 | Ամրակ. մետաղյա. փոքր | տուփ | 60 | 5 | 300 | 12 | 720 | 13 | 780 | 20 | 1200 | 50 | 3000 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Թուղթ նշումների. տրցակներով | տուփ | 600 | 2 | 1200 | 5 | 3000 | 5 | 3000 | 8 | 4800 | 20 | 12000 |
| 16 | Հաշվասարք գրասենյակային | հատ | 1100 | 2 | 2200 | 5 | 5500 | 5 | 5500 | 8 | 8800 | 20 | 22000 |
| 17 | Կարիչի մետաղալարե կապեր. միջին | տուփ | 50 | 20 | 1000 | 50 | 2500 | 50 | 2500 | 80 | 4000 | 200 | 10000 |
| 18 | Սոսնձամատիտ. գրասենյակային | հատ | 50 | 40 | 2000 | 100 | 5000 | 100 | 5000 | 160 | 8000 | 400 | 20000 |
| 19 | թուղթ. A4 ֆորմատի (21x29.7) | տուփ | 1300 | 45 | 58500 | 112 | 145600 | 113 | 146900 | 180 | 234000 | 450 | 585000 |
| 20 | Օրացույց. սեղանի | հատ | 400 | 5 | 2000 | 12 | 4800 | 13 | 5200 | 20 | 8000 | 50 | 20000 |
| 21 | Թղթապանակ ամրակով | հատ | 200 | 8 | 1600 | 20 | 4000 | 20 | 4000 | 32 | 6400 | 80 | 16000 |
| 22 | գրիչ գնդիկավոր | հատ | 25 | 225 | 5625 | 562 | 14050 | 563 | 14075 | 900 | 22500 | 2250 | 56250 |
| 23 | Ամրակ. մետաղյա. մեծ | տուփ | 180 | 3 | 540 | 7 | 1260 | 8 | 1440 | 12 | 2160 | 30 | 5400 |
| 24 | ծրար. մեծ. A4 ձևաչափի համար | հատ | 30 | 50 | 1500 | 125 | 3750 | 125 | 3750 | 200 | 6000 | 500 | 15000 |
| 25 | գրիչ գելային | հատ | 60 | 100 | 6000 | 250 | 15000 | 250 | 15000 | 400 | 24000 | 1000 | 60000 |
| 26 | Թուղթ նշումների համար. սոսնձվածքով | տուփ | 60 | 25 | 1500 | 62 | 3720 | 63 | 3780 | 100 | 6000 | 250 | 15000 |
| 27 | Շտրիխներ | հատ | 150 | 20 | 3000 | 50 | 7500 | 50 | 7500 | 80 | 12000 | 200 | 30000 |
| 28 | Թղթապանակ. արագակար. թղթյա | հատ | 40 | 51 | 2040 | 129 | 5160 | 129 | 5160 | 207 | 8280 | 516 | 20640 |
| Ընդամենը | | | | X | 114655 | X | 285020 | X | 291375 | X | 461740 | X | 1152790 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզ Ք.Գավառ,
Կենտրոնական Հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 08404767
Բանկ՝ ՀՀ ֆին.նախ.գործ.վարչ.
Հ/Հ 900171078...
Աշխատակազմի ղեկավար
աշխատակազմի ղեկավար
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

«Փեն բոքս» ՍՊԸ
Ք.Երևան,Մաշտոցի պող 48
ՀՎՀՀ 00075182
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570017229770100
Տնօրեն՝
Հ.Կաֆայան
ստորագրություն

Հավելված N 3
28 փետրվարի 2017թ. կնքված
N ՀՀ ԳՄ-ՇՀԱՊՁԲ-17/3-1 *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| N | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | Ֆինանսավորման գումարը ՀՀ 2017 թ. պետական բյուջեով նախատեսված ըստ ամիսների՝ ընդ որում | | | | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջին եռամսյակ (հունվար, փետրվար, մարտ) | Առաջին կիսամյակ (ապրիլ, մայիս, հունիս) | Ինը ամիս (հուլիս, օգոստոս, սեպտեմբեր) | Տարեկան (հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր) | |
| 1 | Ռետին հասարակ | 400 | 1400 | 2400 | 4000 | 4000 |
| 2 | ապակարիչ | 200 | 700 | 1200 | 2000 | 2000 |
| 3 | Թուղթ. A3 ֆորմատի /29 7x42/ | - | - | 3000 | 6000 | 6000 |
| 4 | Թղթապանակ.կոշտ կազմով | 3500 | 12000 | 21000 | 35000 | 35000 |
| 5 | Դատարկ սկավառակ. առանց տուփի. CD | 700 | 2450 | 4200 | 7000 | 7000 |
| 6 | Կարիչ. մինչև 20 թերթի համար | 1500 | 5100 | 9000 | 15000 | 15000 |
| 7 | Թղթապանակ. թելով. թղթյա | 1350 | 4725 | 8100 | 13500 | 13500 |
| 8 | Քանոն պլաստիկ | 1000 | 3500 | 6000 | 10000 | 10000 |
| 9 | Գրասենյակային գիրք. մատյան. 70-200 էջ. տողանի | 4950 | 17160 | 29700 | 49500 | 49500 |
| 10 | Գծանշիչ | 1350 | 4680 | 8100 | 13500 | 13500 |
| 11 | Թղթապանակ. պոլիմերային թաղանթ. ֆայլ | 9750 | 34125 | 58500 | 97500 | 97500 |
| 12 | Մատիտ գրաֆիտե միջուկով.հասարակ | 500 | 1740 | 3000 | 5000 | 5000 |
| 13 | Մատիտ. գրաֆիտե. տեղադրվող միջուկով | 450 | 1530 | 2700 | 4500 | 4500 |
| 14 | Ամրակ. մետաղյա. փոքր | 300 | 1020 | 1800 | 3000 | 3000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 15 | Թուղթ նշումների, տրցակներով | 1200 | 4200 | 7200 | 12000 | 12000 |
| 16 | Հաշվասարք գրասենյակային | 2200 | 7700 | 13200 | 22000 | 22000 |
| 17 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | 1000 | 3500 | 6000 | 10000 | 10000 |
| 18 | Սոսնձամատիտ, գրասենյակային | 2000 | 7000 | 12000 | 20000 | 20000 |
| 19 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29 7/ | 58500 | 204100 | 351000 | 585000 | 585000 |
| 20 | Օրացույց, սեղանի | 2000 | 6800 | 12000 | 20000 | 20000 |
| 21 | Թղթապանակ ամրակով | 1600 | 5600 | 9600 | 16000 | 16000 |
| 22 | Գրիչ գնդիկավոր | 5625 | 19675 | 33750 | 56250 | 56250 |
| 23 | Ամրակ, մետաղյա, մեծ | 540 | 1800 | 3240 | 5400 | 5400 |
| 24 | Ֆայլ, մեծ, A4 ձևաչափի համար | 1500 | 5250 | 9000 | 15000 | 15000 |
| 25 | Գրիչ գելային | 6000 | 21000 | 36000 | 60000 | 60000 |
| 26 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | 1500 | 5220 | 9000 | 15000 | 15000 |
| 27 | Շտրիխներ | 3000 | 10500 | 18000 | 30000 | 30000 |
| 28 | Թղթապանակ, արագակար, թղթյա | 2040 | 7200 | 12360 | 20640 | 20640 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 114655 | 399675 | 691050 | 1152790 | 1152790 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան | «Փեն բոքս» ՍՊԸ |
| ՀՀ Գեղարքունիքի մարզ ք Գավառ, | Ք.Երևան,Մաշտոցի պող.48 |
| Կենտրոնական Հրապարակ 7 | ՀՎՀՀ 00075182 |
| ՀՎՀՀ՝ 08404767 | Ամերիաբանկ ՓԲԸ |
| Բանկ՝ ՀՀ ֆին.նախ գործ.վարչ. | հ/հ 1570017729770100 |
| Հ/Հ 900171078299 | Տնօրեն՝ |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Հ. Վարդանյան |
| Ս. Մանուկյան | |
| ստորագրություն | ստորագրություն |

Հավելված 4
28 փետրվարի 2017թ. կնքված
N ՀՀ ԳՄ-ՇՀԱՊՁԲ-17/3-1 *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________
______________
գտնվելու վայրը ________
հհ ____________
______________
հվհհ __________

Պատվիրատու
______________
______________
գտնվելու վայրը ________
հհ____________
______________
հվհհ__________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «              » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «____________» 20 թ
Պայմանագրի համարը՝ _______
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս__________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «____________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Ապրանքը հանձնեց
______________
ստորագրություն
______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________
ստորագրություն
______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
28 փետրվարի 2017թ. կնքված
N ՀՀ ԳՄ-ՇՀԱՊՁԲ-17/3-1 *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ---------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ------------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն